Սրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի Գ.Ղափանցյանի անվան Հ4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի Գ.Ղափանցյանի անվան Հ4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի

Պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

- Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2)ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

- Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի Գ.Ղափանցյանի անվան Հ4 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ում 2021 թվականի հոկտեմբերի 22 -ից մինչև նոյեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Գ.Ղափանցյանի անվան Հ4 հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ..ՀՀ Արագածոտնի մարզ ք Աշտարակ Նարեկացու 79:

Տեղեկությունների համար դիմել դպրոցի կառավարման խորհուրդ, հեռախոս՝ 094731621, էլ. հասցե՝ narine.margaryan.82@mail.ru: